Գրկ 29718

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 3659
11 OCT 2021
Կից Նշում

«08» հոկտեմբեր 2021թ. No 3793 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103093421 առ 29.09.2021թ փորձագիտական եզրակացությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 5 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի, բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Բաղդյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

08.10.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2021 թվականի **08 հոկտեմբեր- ի N3793- Ա հրամանի**

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

| *h* | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողն-ման կար-գավի-ճակը | Եզրակացու-թյան համար և ամսաթիվ | Գրանցման ընթացակարգ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Օֆտան Թիմոլոլ | թիմոլոլ (թիմոլոլի մալեատ) | ակնակաթիլներ | 5մգ/մլ; պլաստիկե սրվակ-կաթոցիկ 5մլ | Սանտեն ԲԸ, Կելոպորտինկատու 1, 33100 Տամպերե- բաց թողնման հսկող, ՆեքստՖարմա ԲԸ, Նիիտիհաանկատու 20, 33720 Տամպերե, Ֆինլանդիա- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի հսկող, Մանուֆակչըրինգ Փեքիջինգ Ֆարմակա (ՄՓՖ) Բ.Վ., Նեպտունուս 12, ՀԻՐԵՆՎԻՆ, 8448 ՄՆ, Նիդերլանդներ- երկրորդային փաթեթավորող | Ֆինլանդիա | Սանտեն ԲԸ, Նիիտիհաանկատու 20, 33720 Տամպերե | Ֆինլանդիա | Դ | 20106 29.09.2021 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 2. | Ավամիս | ֆլուտիկազոն (ֆլուտիկազոնի ֆուրոատ) | ցողաշիթ քթի (դեղակախույթ) | 27,5մկգ/դեղաչափ ; ապակե շշիկ դեղաչափիչ մխոցով (120 դեղաչափ) | Գլաքսո Ուելքոմ Ս.Ա., Ավդա Էքստրեմադուրա, 3, 09400 Արանդա դե Դուերո, Բուրգոս | Իսպանիա | ԳլաքսոՍմիթԿլայն (Իռլանդիա) Լիմիտեդ, 12 Ռիվերվոկ, Սիթիվեստ Բիզնես Կամպուս, Դուբլին 24 | Իռլանդիա | Դ | 20107 29.09.2021 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 3. | Պրոմեդոլ-ԶՆ | տրիմեպերիդին (տրիմեպերիդինի հիդրոքլորիդ) | լուծույթ ներարկման | 20մգ/մլ; (100/20x5/) ամպուլներ 1մլ բլիստերում | "Խարկով Դեղագործական Ձեռնարկություն "Զդորովյե նարոդու" ՍՊԸ, 61002, Խարկով, Կուլիկիվսկա փ. 41 | Ուկրաինա | "Խարկով Դեղագործական Ձեռնարկություն "Զդորովյե նարոդու" ՍՊԸ, Խարկով նահանգ, 61013, ք. Խարկով, Շևչենկո փ., 22 | Ուկրաինա | Դ/Հ | 20108 29.09.2021 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Կապեցիտաբին Ֆարմաքեյր | կապեցիտաբին | դեղահատեր թաղանթապատ | 500մգ; (120/12x10/) բլիստերում | Ֆարմակար Պրեմիում Լիմիտեդ, ՀՀՖ 003, Հալ Ֆար Ինդաստրիալ Իստեյտ, Բիրզեբուգիա ԲԲգ 3000 | Մալթա | Ֆարմակար Պրեմիում Լիմիտեդ, ՀՀՖ 003, Հալ Ֆար Ինդաստրիալ Իստեյտ, Բիրզեբուգիա ԲԲգ 3000 | Մալթա | Դ | 20110 29.09.2021 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |
| 5. | Դոցետաքսել Մուսման | դոցետաքսել | խտանյութ կաթիլաներարկ ման լուծույթի | 20մգ/մլ; ապակե սրվակ 4մլ | Բենդալիս ԳմբՀ, Կելտենրինգ 17, Օբերաչինգ, Բայերն, 82041- բաց թողնման հսկող, Ակտավիս Իտալիա Ս.պ.Ա., Վիալե Պաստյոր, 10, 20014 Ներվիանո, Միլան, Իտալիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Գերմանիա | Մուսման Ֆարմասյութիքլզ ՍՊԸ, Վանահովիտ 8, գ. Պռոշյան, Աշտարակի խճ., Կոտայքի մարզ 2413 | Հայաստանի Հանրապետ ություն | Դ | 20111 29.09.2021 | Ընդհանուր հիմունքներով (նոր կարգ) |